Մ-79

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենադպրի պարտականությունները կատարող
Դ. Սանֆրյան-Գրիգորյան
Դոկտոր պատմագիտության

ՄԽՈՅԱՆ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒԼՂԱՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (19-ՐԴ ԴԱՐԻ 40-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ա. Ա. Խառատյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր
Ֆ. Վ. Մովսիսյան

պ.գ.թ., դոցենտ
Ս. Թ. Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 24-ին, ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 23-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Գ.Ա. Մարգարյան

<u>Թեմայի արդիականությունը</u>

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Բալկանյան ժողովուրդների կյանքում տեղի ունեցան կարևոր տնտեսական, սոցիալական և մշակութային տեղաշարժեր: XIX դ. սկզբին սկսվեց, իսկ ավելի ուշ՝ 1850-1870-ական թթ. նոր թափ ստացավ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների, հատկապես բուլղարների, ազատագրական պայքարը:

1830-ական թթ. բուլղարները Օսմանյան կայսրությունում առաջին քայլերը ձեռնարկեցին թուրքական լծից ազատագրվելու համար: Իսկ 1840-ական թվականներին՝ մինչև Ղրիմի պատերազմը, բուլղար ժողովրդի ապստամբություններն աստիճանաբար ավելի համակարգված բնույթ ստացան: 1856 թ. Փարիզի խորհրդաժողովից հետո՝ բուլղարների ազատագրական պայքարը վճռական փուլ թևակոխեց և ի վերջո հանգուցալուծվեց 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, որով Բուլղարիային ինքնավարություն շնորհվեց: Բուլղարների պայքարը իր արձագանքը գտավ այդ տարիների հայկական մամուլի էջերում: Բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի վերաբերյալ հայկական մամուլի հրապարակումների վերլուծությունն էական նշանակություն ունի հայ պատմագրության համար: Դրանք որոշակի ազդեցություն ունեցան և գործնական հողի վրա դրեցին օսմանյան լծի դեմ հայերի ազատագրական պայքարը: Ինչով էլ պայմանավորված է թեմայի կարևորությունը և արդիականությունը:

Ատենախոսությունում ուսումնասիրության առարկա են դարձել այդ ժամանակաշրջանի հայկական այն պարբերականները, որոնք առանձնանում էին խնդրո առարկա թեմային վերաբերող իրենց հրապարակումներով: Դրանցում ցույց է տրվում մամուլի գաղափարախոսական կարևոր արժեքը, որը փոխանցում էր ազատագրական պայքարի գաղափարաբանությունը հայ ընթերցողին՝ ոգևորելով վերջինիս հաջող ազատարարների օրինակներով:

<u>Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:</u> Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել XIX դարի 40-70-ական թթ. բուլղարների ազգային ազատագրական պայքարն ու դրա անդրադարձները հայկական մամուլի էջերում: Ուսումնասիրության առաջնային խնդիրներն են.

- բուլղարների ազատագրական պայքարի պատճառների, ընթացքի ու հետևանքների լուսաբանումը, դրանց պատճառահետևանքային կապերի բացահայտումն ու արժևորումը:
- Բուլղարների կրոնական խնդիրների արծարծումը, որը ազատագրական պայքարի մյուս կողմն է հանդիսանում և համարվում է

ազատագրական պայքար՝ ուղղված հունական եկեղեցու կամայականությունների դեմ:

• Մեծ տերությունների շահերի ու խնդիրների բացահայտումը բուլղարների ազատագրական պայքարի հարցում և դրանց ներկայացումը հայկական մամուլի տեսանկյունից:

• Բուլղարների ազատագրական պայքարի բնութագիրը հայկական մամուլի տեսանկյունից, ինչպես նաև բուլղարների ազատագրական պայքարի ներկայացումը և լուսաբանումը:

• Արևմտահայ և արևելահայ մամուլի գաղափարախոսական տարբերությունների ներկայացումը և դրանց հրապարակումների վրա Օսմանյան կայսրության, ինչպես նաև Ռուսաստանյան կայսրության ազդեցությունը:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրվել է փոխկապակցված մեթոդների և մոտեցումների համալիրի միջոցով: Բուլղարների ազատագրական պայքարի ընթացքի ու զարգացումների, դրանց հիմնական գործոնների հետ կապված հարցադրումները ենթարկվել են քննական մեկնության, կիրառվել է փաստերի համեմատական-համադրական սկզբունքը: Բուլղարների ազատագրական պայքարը և դրա վրա մեծ տերությունների ազդեցությունները ուսումնասիրվել են համակարգային մեթոդով, իսկ արևմտահայ և արևելահայ մամուլի արձագանքները՝ դրանց առաջարկած միտումների, առանձնահատկությունների ներկայացմամբ: Ատենախոսության համար հիմնական աղբյուր դիտվող մամուլի ուսումնասիրությունն ու վերլուծությունը իրականացվել է բովանդակային վերլուծության մեթոդի միջոցով: Մամուլի ուսումնասիրության համար օգտագործվել է նաև նրա գաղափարախոսական դրսևորումները և նշանակությունը: Գնահատվել է դրանց ստեղծման արժեհամակարգն ու մթնոլորտը:

Աշխատանքի գիտական նորույթ:

Հայ պատմագրության մեջ դեռևս չկա առանձին ուսումնասիրություն, որը նվիրված լինի Օսմանյան կայսրությունում բուլղարների ազատագրական պայքարի վերաբերյալ հայկական մամուլի հրապարակումներին: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին փորձն է արվել համակողմանի և ամբողջական ուսումնասիրել և վերլուծել հայկական մամուլի արձագանքները վերոհիշյալ խնդրի վերաբերյալ:

Արևմտահայ և արևելահայ պարբերականների հոդվածների ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել այն մոտեցումները և դիրքորոշումները որոնք լայն տարածում ունեին հայ հասարակության շրջանում: Բացի այդ, ցույց է տրվել, որ բուլղարների ազատագրական պայքարը ներկայացնելիս հայ լրագրերը և ամսագրերը հիմնականում օգտվել են արևմտյան պարբերականներից:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել Բուլղարիայի և Բալկանյան այլ երկրների պատմության ուսումնասիրության համար: Բացի այդ բուլղարների ազատագրական պայքարի ներկայացված հատվածները հիմք են Արևելյան հարցի ուսումնասիրությունների համար և կարող են համեմատության մեջ դրվել այդ ժամանակաշրջանի մյուս ազատագրական պայքարների հետ, մասնավորապես, հայկական ազատագրական պայքարի: Աշխատանքը արժևորում է մամուլի դերը նաև պատմագիտության զարգացման գործում և լայն պատկերացում է տալիս հայ հասարակական մտքի արդիական ու գործնական ուսումնասիրության համար:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրությունը ընդգրկում է 1840-1870-ական թթ., երբ բուլղարների ազատագրական պայքարը թևակոխել էր վճռական փուլ: Արևմտահայ մամուլը խնդրին անդրադառնում է հենց ապստամբությունների առաջին փորձերից, որոնք տեղի են ունեցել Նիշում, Բրիլեում և այլուր: Արևելահայ մամուլը առավել ուշ է սկսել անդրադառնալ խնդրին՝ իր հիմնական անդրադարձները կատարելով Ղրիմի պատերազմից հետո: Ե՛վ արևմտահայ, և՛ արևելահայ մամուլի հրապարակումները հասցվում են մինչև 1878 թ. Բեռլինի վեհաժողովը ու Բուլղարիայի ինքնավարության հռչակման գործընթացը:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, քննարկման և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի երեք հոդվածներում:

Օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների տեսություն: Բուլղարիայի ազատագրական պայքարը թեև ունի բազմաթիվ անդրադարձներ հատկապես բուլղար և ռուս գիտնականների աշխատություններում, սակայն հայ իրականության մեջ չի լուսաբանվել և մանրամասն չի քննվել: Առանձին հոդվածները, որ կան այս թեմայով, հիմնականում վերաբերում են Բուլղարիայի պատմության ավելի ուշ փուլերին և միայն թռուցիկ անդրադարձներ են կատարում ազատագրական պայքարին: Այս թեմայով խոշոր աշխատանք է համարվում Ա. Ներսիսյանի «Բուլղար ժողովրդի պայքարը Սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թթ.»[1], սակայն այն հիմնականում լուսաբանում է XIX դարի 70-ական թթ. իրադարձությունները և հպանցիկ է անդրադառնում դրան նախորդող ժամանակներին: Բացի այդ, գիրքը գրվել է Խորհրդային իշխանության

[1] Ներսիսյան Ա., Բուլղար ժողովրդի պայքարը Սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թթ., Երևան, 1978:

տարիներին և կրում է տվյալ ժամանակաշրջանի գաղափարախոսական պարտադրանքները: Դա է պատճառը, որ այստեղ անխնա քննադատության են ենթարկվում եվրոպական երկրները և գովերգվում Ռուսաստանի՝ ազատագրողի կերպարը: Հայ հեղինակներից բուլղարների ազատագրական խնդրին անդրադարձել է նաև Ա. Անտոնյանը «Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմեն» աշխատանքով[2], որը հիմնականում պատկերում է Բալկանյան առաջին պատերազմը՝ ընդհանուր գծերով ներկայացնելով նաև նախորդ շրջանի իրադարձությունները: Առանձին փոքր ակնարկներ կան ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին Ա. Ալպոյաճյանի, Կ. Հայրապետյանի, Զ. Ղասաբյանի աշխատանքներում[3]:

Ժամանակաշրջանի ուսումնասիրության համար կարևոր դերակատարություն ունեն բուլղար ազատարարների՝ Վ. Լևսկու, Ի. Վազովի, Լ. Կարավելովի, Ք. Բոտևի աշխատանքները[4], որոնք ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի ոգին: Հեղինակները լավագույնս ցույց են տվել, թե ինչ պայմաններում էին ապրում բուլղարները նշված ժամանակահատվածում, ինչպիսի գաղափարներ են առաջարկվել բուլղարների ազատագրական պայքարի տարիներին: Ազատագրական պայքարի նշված գործիչները այդ աշխատանքներում լուծումներ են առաջարկում, փորձում ելքեր գտնել, ոգեշնչում են ժողովրդին թուրք զավթիչների դեմ պայքարելու համար:

Օգտագործվել են նաև մի շարք աղբյուրագիտական նյութեր, որոնք վերցվել են հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուներից[5]: Այդ նյութերը հնարավորություն են տալի մանրամասն քննել և վերլուծել բուլղարների ազատագրական պայքարի տարբեր կողմերը:

Ուսումնասիրվող գրականության մեջ կարևոր են նաև բուլղարացի այլ հեղինակների մի շարք գործերը: Այդ հեղինակներից Ն. Գանչևի, Վ. Տրայկովի,

[2] Անտոնյան Ա., Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմեն, Կ. Պոլիս, 1912:

[3] Ալպոյաճյան Ա., Պուլկարաց պատմութիւնը: Անոնց ծագումէն մինչեւ մեր օրերը, Վառնա, 1910: Հայրապետյան Կ., Հայ-բուլղարական գրական կապերը XIX դարի վերջում և XX դարի սկզբին, Բանբեր Երևանի համալսարանի, 1972, 1: Ղասաբյան Զ., Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978:

[4] Բոտև Ք., Երկեր, Երևան, 1955: Վազով Ի., Լծի տակ, Երևան, 1959: Ботев Х., Пълно събрание на съчиненията под ред. на М. Димитров. т. III, Статии по политически и обществени въпроси, Кореспонденция, С., 1940; Ботев Х., Публицистика. Статьи, очерки, письма, Москва, 1952; Стекольников А., Васил Левский, Москва, 1958; Ботев Х., Избранное, Москва, 1963; Ботев, Х., Избранное, Москва, 1976; Ботев Х., Избранное, София, 1981; Ботев Х., Стихотворения, публицистика, София, 1983; Благоев Д., Очерки истории социализма в Болгарии, Москва, 1989.

[5] Документи за българската история, т 2, София, 1932; Документи за българската история, т. 3, София, 1932;.Освобождение Болгарии от Турецкого ига, т. 1-3, Москва, «Наука», 1961-1967; Романски С., Австрийски документи по Нишкото българско възстание от 1841 година, «Сборник на народни умотворения, наука и книжнина», кн. XXVI, София, 1912.

Կ. Շարովայի, Ի. Ունջիեի, Ց. Ունջիևայի, Կ. Դերժավինի, Կ. Պոգլուբկոյի[6] աշխատանքները, որոնք մանրամասն քննում և ներկայացնում են Բուլղարիայի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչների կյանքն ու գաղափարախոսությունը՝ ցույց տալով նրանց դերակատարությունը ազգային-ազատագրական պայքարի տարբեր փուլերում: Նշված հեղինակները ազատագրական պայքարի գաղափարախոսներին ներկայացնելուց զատ տալիս են նաև ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական, տնտեսական, սոցիալական պատկերը:

Աշխատանքում օգտագործվել են նաև տվյալ ժամանակաշրջանի միջազգային քաղաքական պատկերն արտացոլող մի շարք աշխատանքներ[7], որոնք ներկայացնում են ժամանակաշրջանի խոշոր տերությունների դիրքորոշումները, նրանց վերաբերմունքը բուլղարների ազատագրական պայքարին: Այդ աշխատանքներում հիմնականում զգացվում է միակողմանի դիրքորոշում այս կամ այն պետությանը միտված: Դրանցում քննարկման հիմնական առարկան Փարիզի և Բեռլինի կոնգրեսներն են ու դրանց նախորդած ու հաջորդած իրադարձությունները, որտեղ գլխավոր դերակատարությունը պատկանում է մեծ տերություններին՝ մասնավորապես այս հարցում շահագրգիռ երկրներին, ինչպիսիք էին Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան, Անգլիան, Օսմանյան կայսրությունը:

Ուշադրության են արժանի նաև այն աշխատությունները, որոնք վերաբերում են Բուլղարիայի պատմությանը: Այստեղ օգտագործվել է Գ. Լիտվարինի, Լ. Վալևի, Դ. Կոսևի աշխատանքները[8]: Նրանք համակողմանի ներկայացնում են Բուլղարիայի պատմությունը և անդրադարձներ են կատարում ազգային-ազատագրական պայքարին՝ խոսելով ազատագրական պայքարի շարժառիթների, գործիչների, զինված խմբերի և արդյունքների մասին:

[6] Державин К., Христо Ботев, Москва, 1962; Шарова К., Любен Каравелов и българсйото освободително движение, 1860-1867, София, 1970; Трайков В., Георги Стойков Раковски: Биография, София, 1974; Унджие И., Унджиева Ц., Христо Ботев: жизнь и творчество, Москва, 1976; Траиков В., Идеологически течения и програми в национално-освободителните движения на Балканите до 1878 година, София, 1978; Поглубко К., Христо Ботев и Россия, Кишинев, 1976; Генчев Н., Апостол свободы, София, 1987.

[7] Международные отношения на Балканах 1830-1856 гг., Москва, 1990; Международные отношенич на Балканаь 1856-1878 гг., Москва, 1986; Медведева О., Российская дипломатия и эмиграция болгарского населения в 1830-е гг., Сов. слав., № 4, 1988; Анчев А., Руската общественност и българското национално Възраждене и Русия, София, 1981; Россия и Освобождение Болгарии, Москва, 1982; Дамянов С., Франция и българската национална революция, София, 1968; Тодорв М.Н., Англия, Россия и танзимат, Наука, Москва, 1983.

[8] Литаврин Г., Краткая история Болгарии с древнейших времен до наших дней, Москва, 1987; Валев Л. Б., Исследования по новой и новейшей истории Болгарии, Москва, 1986; Косев Д., Новая история Болгарии, Москва, 1852.

Բուլղարների եկեղեցական ինքնավարության խնդիրները տեղ են գտել մի շարք աշխատանքներում, որոնցից օգտագործվել են Ա. Պապախուրիստոյի, Կ. Բոյկիկևայի աշխատությունները[9]: Մասնավորապես Ա. Պապախուրիստոն իր աշխատանքում ներկայացնում է հունական ֆանարիոտ հոգևորականության դերը, ովքեր անխնա ճնշումներ էին գործադրում Օսմանյան կայսրության հպատակ ազգերի կրոնական փոքրամասնությունների վրա: Կ. Բոյկիկևան անդրադառնում է բուլղարական ողջ քրիստոնեական պատմությանը և կենտրոնանում եկեղեցական ինքնուրույնության հռչակման բուլղարական պայքարի վրա:

Բուլղարների տնտեսական և մշակութային խնդիրներին անդրադարձել են Վ. Շերեմետը, Խ. Գլուշակովը, Ն. Գանչևը, Ժ. Նատանը, Ա. Ժելտյակովը և Յու. Պետրոսյանը[10]: Նրանք քննարկում էին Օսմանյան կայսրության և բուլղարաբնակ տարածքների տնտեսական, կրթական, սոցիալական, մշակութային խնդիրները: Այստեղ կարևոր էր նրանց մեկնաբանությունները, որոնք անմիջական ազդեցություն էին ունեցել ազատագրական պայքարի վրա: Այս գործոնների զարգացումն ու նոր նկատվող տեղաշարժերն էին, որ իր ժամանակ էական ազդեցություն էին թողել բուլղարների ազատագրական պայքարի վրա: Բալկանյան տարածքների և Բուլղարիայի տնտեսական խնդիրները լավագույնս ներկայացվել են Ն. Տոդորովի «Բալկանյան քաղաքը XV-XIX դդ.»[11] աշխատության մեջ: Այստեղ մանրամասն վերլուծության է ենթարկվել բալկանյան քաղաքների տնտեսական կարողությունները, առևտրական համակարգը, բնակչության տեղաշարժերը, որոնք անառարկելի դեր են ունեցել ազգային- ազատագրական պայքարի վրա:

Բուլղարիայի ազգային-ազատագրական պայքարի տարբեր փուլերը ներկայացվել են Գ. Մարկովի, Վ. Կոնոբանի, Վ. Տրայկովի, Ի. Միտևի, Ն. Չերվենկովի և այլոց աշխատանքներում[12]: Նրանք ներկայացրել են

[9] Panayotis A., Papachuristou, The three faces of the phanariots: An inquiry into the role and motivations of the greek nobility under Ottoman rule, 1683-1821, Canada, 1992; Бойкикева К., Болгарская парвославная церков, София, 2005.

[10] Натан Жак, Болгарское Возрождение, Москва, 1949; Натан Жак, История экономического развития Болгарии, Москва, 1961; Желтяков А., Петросян Ю., История просвещения в Турции (конец XVIII-начало XX века), Москва, 1965; Глушаков Х., Търговските връзки на Англия с българските земи от 30-те година на XIX в. до Освобожденето. България в света от древноста до наши дни, София, 1979; Шеремет В., Русско-турецкая торговля и балканские земли. Конец XVIII-первая половина XIX в., Балканские исследования, Москва, 1984, Вып. 9, с. 74-86; Генчев Н., Българската възрожденска интелигенция, София, 1991.

[11] Тодоров Н., Болканский город XV-XIX веков, Москва, 1976.

[12] Мещерюк И., Переселение болгар в Южную Бессарабию, 1828-1834 гг., Кишинев, 1965; Конобеев В. Д., Национально-освободительное движение в Болгарии в 1853-1854 гг., Освободительное-движение западных и южных славян, Академия наук СССР, Ученые

բուլղարների տարբեր ժամանակներում իրականացված ազատագրական պայքարը, դրանց ղեկավարներին ու գործիչներին:

Բուլղարների ազատագրական պայքարն արտացոլվել է նաև ակադեմիական աշխատություններում[13], որի տարբեր հատորների մի ստվարածավալ հատվածը հենց ներառում է բուլղարների ազատագրական պայքարը, որը բավական համակողմանի ներկայացվում է այս աշխատություններում:

Մեծ արժեք է ներկայացնում 1876 թ. ապրիլյան ապստամբությանը նվիրված Ա. Ուլունյանի «1876 թ. ապրիլյան ապստամբությունը Բուլղարիայում և Ռուսաստանը»[14] աշխատանքը: Այստեղ ներկայացված են ապստամբության պատճառները, դրան նախորդած իրադարձությունները, ապստամբական կազմակերպություններն ու ապստամբության ընթացքը, ավարտն ու հետևանքները: Աշխատանքը կարևոր է մեր ուսումնասիրության տեսանկյունից այն առումով, որ տալիս է նաև ժամանակի մամուլի գնահատականները՝ ընդ որում, առանձին գլխով ներկայացված են հայկական մամուլի արձագանքները:

Հայկական մամուլի անդրադարձների տեսանկյունից կարևոր են պարբերական մամուլի վերլուծություններն ու մատենագիտությունները[15]:

записки института славяноведения, т. XXIX, Москва, 1965; Траиков В., Идеологически течения и програми в национално-освободителните движения на Балканите до 1878 година, София, 1978; Червенков Н., Политияеские организации болгарского национально-освободительного движения во второй половине 50-х – 60-е годы XIX в., Кишинев, 1982; Марков Г., История на Българите, т. 2, 2004.

[13] История на България, т. 5 София, 1985; История Болгарии , том 1, Москва, 1954..

[14] Улунян А. А., Апрельское восстание 1876 года в Болгарии и Россия (очерки), Москва, 1978.

[15] Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934: Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (կազմ.՝ Հովհ. Պետրոսյան), հ. 1, Երևան, 1956: Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (կազմ.՝ Հովհ. Պետրոսյան), հ. 2, Երևան, 1957: Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956: Կարինյան Ա., Հայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1963: Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967) (կազմ.՝ Ա. Կիրակոսյան), Երևան, 1970: «Արևելյան մամուլ» հանդեսի մատենագիտությունը, Երևան 1975: Ղուկասյան Գ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, 1975: Մխիթարյան Մ., XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976: Խառատյան Ա., Արևմտահայ մամուլի և հրապարակոսության պատմությունից, Երևան, 1980: Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), Երևան, 1984: Բաբլոյան Մ., Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երևան, 1986: Հայ պարբերական մամուլը: Համահավաք ցուցակ (1794-1980), (կազմ.՝ Մ. Բաբլոյան), Երևան, 1986: Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Երևան, 1987: Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989: Մխիթարյան Մ.,

Այստեղ կազմված մատենագիտական ցանկերը և հայկական մամուլի վերլուծությունները ուղղորդող դեր են կատարում ուսումնասիրության համար:

Ուսումնասիրության երկրորդ և երրորդ գլուխների համար աղբյուր են հանդիսացել հայկական մամուլի հրապարակումները, որոնք հրապարակվել են XIX դարի 40-70-ական թթ.: Արևմտահայ մամուլից օգտագործվել են «Արշալույս Արարատյանի»[16], «Բազմավեպի»[17], «Եվրոպայի»[18] «Մասիսի»[19], «Ավետաբերի»[20], «Արևելյան մամուլի»[21] համարները: Արևմտյան մամուլը ներկայացնող այս թերթերն ու ամսագրերը ունեին արտահայտված Օսմանյան կողմնորոշում, որը պարտադրված էր տիրող հասարակարգի կողմից: Այդ թերթերը պաշտպանում էին Օսմանյան կայսրության բալկանյան քաղաքականությունը և հիմնականում դեմ էին արտահայտվում բուլղարների ազատագրական պայքարին՝ դա համարելով երկրի ներքին կայունությունը վտանգող երևույթ:

Արևելահայ մամուլը հակառակ վերաբերմունքն էր ցուցաբերում այս խնդրին և մեղադրում էր Օսմանյան իշխանություններին: Արևելահայ մամուլում այս խնդիրը լուսաբանել են «Մասյաց աղավնի»[22], «Մեղու Հայաստանի»[23], «Մշակ»[24], «Փորձ»[25] ամսագրերն ու թերթերը: Այս լրագրերը ներկայացրել են բուլղարների ապստամբական շարժումները, եկեղեցական խնդիրները, ռուս-թուրքական պատերազմները և դրանց առնչությունները բուլղարների հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը դարի առաջին կեսին, Երևան, 1994: Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Երևան, 1995: Գևորգյանը Լ., Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996: Հայ պարբերական մամուլի պատմություն (1794-1900), հ. 1, Կահիրե, 2007:

[16] «Արշալույս արարատյան» 1841 թ.՝ № 33, 38, 40, 41, 49, 252, 366, 387, 640, 642, 647, 837:

[17] «Բազմավեպ», 1844 թ.՝ № 3:

[18] «Եվրոպա» 1850 թ.՝ № 31, 33:

[19] «Մասիս» № 435, 468, 518, 542, 545, 567, 831, 833, 839, 857, 865, 900, 938, 940, 959, 1004, 1017, 1093, 1193, 1197, 1200, 1203, 1228, 1230, 1237, 1238, 1239, 1246, 1273, 1274, 1279, 1282, 1283, 1290, 1291, 1293, 1297, 1317, 1323, 1336, 1662, 1837, 1849, 1852, 1854, 1858, 1860, 1865, 1867, 1868, 1869, 1874, 1876, 1879, 1882, 1883, 1927, 1942, 1990, 1995, 1996, 1997, 2149, 2150: Օրաթերթ № 111, 147, 156, 197, 206, 207, 234, 253, 264, 269, 342, 370, 399:

[20] «Ավետաբեր» 1876 թ.՝ № 5, 8, 10, 15, 17, 18, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27:

[21] «Արևելյան մամուլ» 1872 թ.՝ № 7, 9, 1873՝ № 1, 1876՝ № 8, 9 1877՝ № 1, 4, 1878՝ № 6, 7:

[22] «Մասյաց աղավնի» 1861 թ.՝ № ԺԸ:

[23] «Մեղու Հայաստանի» 1858թ.՝ № 29, 36, 45, 1861թ.՝ № 6, 7 1864թ.՝ № 15, 18, 32, 1869թ.՝ № 26, 29, 1870թ.՝ № 20, 1872թ.՝ № 14, 24, 38, 44, 1876թ.՝ № 18, 21, 23, 24:

[24] «Մշակ» 1872թ.՝ № 51, 1874՝ № 5, 1876թ.՝ № 24, 26, 35:

[25] «Փորձ» 1876թ.՝ № 1, 3, 24:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են խնդիրներն ու հիմնական նպատակները, թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը, որը կրում է **«Բուլղարների ազատագրական պայքարը Օսմանյան կայսրությունում. հիմնական հարցեր»** վերնագիրը, անդրադառնում է բուլղարների ազատագրական պայքարին Օսմանյան կայսրությունում՝ շեշտը դնելով ազատագրական պայքարի պատճառների, փուլերի, գլխավոր գաղափարախոսների և հիմնական միտումների ներկայացմանը: Ատենախոսության տվյալ գլխում ներկայացվում են Օսմանյան կայսրությունում բուլղարների ազատագրական պայքարի հիմնական հարցերը 1840-1870-ական թթ., որոնք միտված էին ազատագրական պայքարի հաղթանակին և ինքնուրույնության ձեռք բերմանը: Առաջին գլուխը իր հերթին բաղկացած է երեք ենթաբաժիններից:

Առաջին ենթագլխում, որը կրում է **«Ազատագրական պայքարի պատճառները և սկիզբը (1840-1850-ական թթ.)»** վերնագիրը, ներկայացում է բուլղարների ազատագրական պայքարի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային պատճառները: Անդրադարձ է արվում ազատագրական պայքարի սկզբնավորմանը, նրա առաջին գաղափարախոսներին ու առաջնորդներին, Օսմանյան կայսրության ներքին խնդիրներին, որոնք նպաստել են ազատագրական պայքարին: Սույն ենթաբաժնում լուսաբանվել է նաև Եվրոպական պետությունների շահերն ու խնդիրները Բուլղարական հարցում:

Երկրորդ՝ **«Պայքարը բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար Օսմանյան կայսրությունում»** ենթագլխում, ներկայացվում են բուլղարական եկեղեցու խնդիրները Կ. Պոլսի հունական պատրիարքության հետ: Այս առումով անդրադարձ է կատարվում ֆանարիոտ հոգևորականությանը, եկեղեցական ինքնուրույնության համար բուլղարների մղած պայքարին, այս հարցում Օսմանյան կայսրության ղեկավարության զբաղեցրած դիրքին, բուլղարների եկեղեցական ինքնավարության ծրագրերին, անգլիական և ֆրանսիական միսիոներների գործունեությանը բուլղարաբնակ տարածքներում և Ռուսաստանի օգնությանը բուլղարներին եկեղեցական ինքնուրույնություն ստանալու հարցում: Ներկայացվել է բուլղարների ապստամբությունների ազդեցությունը եկեղեցական ինքնավարություն տալու հարցում: Տրվել է եկեղեցական ինքնավարություն ստանալու հիմքերը և այն գործընթացը, որը տարավ Օսմանյան կայսրության կողմից բուլղարական էկզարխությունը հռչակմանը:

Առաջին գլխի երրորդ՝ **«Ազատագրական պայքարի գլխավոր գաղափարախոսներն ու նրանց գործունեությունը 1860-1870-ական թթ.»** ենթագլխում, քննարկվում է Լ. Կարավելովի, Վ. Լևսկու, Ք. Բոտևի և ազատագրական պայքարին մասնակցություն ունեցած այլ գաղափարախոսների գործունեությունը: Ներկայացվել է նաև Ղրիմի պատերազմից հետո հրապարակված Թանզիմաթի ազդեցությունը ազատագրական պայքարի նոր՝ գաղափարախոսական ամրապնդում ստացած փուլի վրա: Անդրադարձ է արվում 1877-1878 թթ ռուս-թուրքական պատերազմին և Բեռլինի վեհաժողովին՝ ցույց տալով Բուլղարիայի ինքնավարության հռչակման գործընթացը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Արևմտահայ մամուլը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին (1840-1870-ական թթ.)»** նվիրված է արևմտահայ մամուլի, դեմոկրատական, ազգային-պահպանողական, լիբերալ ուղղությունների անդրադարձներին բուլղարների ազատագրական պայքարին: Ներկայացվել է արևմտյան մամուլի անդրադարձները դիրքորոշումները, վերլուծությունները այն իրողություններին, որոնցով բուլղարները ինքնավարություն ստացան:

Առաջին՝ **«Արևմտահայ մամուլը բուլղարների ազատագրական պայքարի մասին 1840 թվականից մինչև Փարիզի հաշտության կոնֆերանս»** ենթագլխում, քննարկվում են արևմտահայ մամուլի կողմնորոշումները բուլղարական հարցում: Լուսաբանվել է մամուլի տարբեր ուղղությունների անդրադարձները Թանզիմաթից հետո սկսված ազատագրական շարժումներին, որոնք արյան մեջ խեղդվում էին իշխանությունների և տեղական մուսուլմանական բնակչության կողմից:

Երկրորդ՝ **«Բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի արձագանքները արևմտահայ մամուլում Փարիզի պայմանագրից մինչև 1870-ական թթ. կեսերը»** ենթագլխում ներկայացվում են արևմտահայ մամուլի տարբեր ուղղությունների դիրքորոշմները: Քննվում են բուլղարական լեգեոնի, Մեծ տերությունների վերաբերյալ արևմտահայ մամուլի անդրադարձները:

Երրորդ ենթագլխում՝ **«Բուլղարների կրոնական ինքնավարության պայքարի արձագանքները արևմտահայ մամուլում»**, ներկայացվել է արևմտահայ մամուլի վերաբերմունքը կրոնական ինքնավարություն ստանալու բուլղարների պայքարին: Քննարկվել է արևմտահայ մամուլի հիմնականում բացասական վերաբերմունքը այս հարցին: Նշված ենթաբաժնում ներկայացվում են նաև այդ տարիներին կաթոլիկական և բողոքական քարոզիչների մասին արևմտահայկական մամուլի անդրադարձները:

Չորրորդ՝ **«1876 թ. բուլղարական ապստամբության արձագանքները արևմտահայ մամուլում»** ենթագլխում քննվում են արևմտահայ մամուլի աստիճանական գաղափարախոսական փոփոխությունները, որոնց հետևանքով

մամուլը որոշակիորեն սկսում է դրական արտահայտվել բուլղարների ազատագրական պայքարի մասին:

Հինգերորդ ենթագլխում՝ **«1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արձագանքները արևմտահայ մամուլում»**, ներկայացվում է արևմտահայ մամուլի վերաբերմունքը պատերազմին և Բեռլինի վեհաժողովին, որտեղ մամուլի տարբեր ուղղությունները տարբեր կողմնորոշում ունեին հարցի վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ՝ **«Արևելահայ մամուլը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին (1840-1870-ական թթ.)»** գլխում ներկայացվում են արևելահայ մամուլի տարբեր ուղղությունների տեսակետները Օսմանյան կայսրության կազմում իրենց ազատության և իրավունքների համար պայքարող բուլղար ժողովրդի կողմից: Քննարկվում են արևելահայ մամուլի ռուսական կողմնորոշման խնդիրները և հայ ազատագրական պայքարի աշխուժացմանը միտված հոդվածները:

Երրորդ գլխի առաջին՝ **«Արևելահայ մամուլի անդրադարձը բուլղարական ազգային եկեղեցու անկախացմանը»** ենթագլխում քննարկվել են արևելահայ մամուլի դիրքորոշումները ինքնուրույն եկեղեցական խնդրին, քննարկվել է նաև հայկական իրականության մեջ տարածված հասունյան և հակահասունյան պայքարը, որը արևելահայ մամուլում հաճախ նույն հարթության վրա է դրվել բուլղարական ազգային եկեղեցական պայքարի հետ:

Երկրորդ՝ **«Արևելահայ մամուլը բուլղարական հարցի մասին»** ենթագլխում ներկայացվում են արևելահայ մամուլի անդրադարձները բուլղարական խնդրին, որտեղ կարևորվել է նրա գաղափարախոսական ուղղությունները և տերությունների դիրքորոշումները այս հարցին:

<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ</u> մեջ, հանրագումարելով ստացված արդյունքերը, ամրագրված են հետևյալ եզրահանգումները.

1. Օսմանյան կայսրության թուլացումը և պարտությունը ռուս-թուրքական պատերազմներում սասանեցին սուլթանական վարչակարգի դիրքերը՝ հնարավորություն տալով հպատակներին ուժեղացնել իրենց ձգտումները սուլթանական տիրապետությունից ազատագրվելու համար: Զարգացավ բուլղար առևտրականների դասը, որը տնտեսական մեծ ներուժ կենտրոնացրեց իր ձեռքում՝ խթանելով ազատագրական պայքարի վերելքին: Տարբեր պետություններում բուլղարական հյուպատոսությունների բացումը նպաստեց բուլղարների խնդիրների արծարծմանը մեծ տերություններում: Այդ ամենով հանդերձ, ազատագրական պայքարը սկսելու համար 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին ստեղծվեցին մի շարք արտաքին և ներքին քաղաքական, տնտեսական ու մշակութային պայմաններ: Այդ պայմաններից յուրաքանչյուրն իր ծանրակշիռ դերն ունեցավ բուլղարների ազատագրական պայքարի գործում:

2. Արևմտահայ մամուլը 1840-1850-ական թթ. մի շարք անդրադարձներ նվիրեց բուլղարների ազատագրական պայքարին, որոնք հիմնականում

տեղեկատվական բնույթ էին կրում: Արևմտահայ թերթերը գտնվելով օսմանյան տիրապետության տակ, չկարողացան ազատագրական պայքարը ներկայացնել իր բոլոր կողմերով, քանզի հրատարակչությունները փակելու և նրանց նկատմամբ հալածանքներ սկսելու մշտական վտանգի տակ էին գտնվում: Արևմտահայ թերթերը երբեմն զերծ են մնացել որոշ ապստամբական ձգտումներ ներկայացնելուց, հավանաբար չցանկանալով այն տարածել հայ բնակչության շրջանում՝ դա համարելով վաղաժամ և տվյալ ժամանակամիջոցում անլուծելի խնդիր: Հավանական է նաև, որ այս մտայնությունն էր ստիպում արևմտահայ պարբերականներին նվազեցնել բուլղարների ազատագրական պայքարի լուսաբանման ծավալները, նրանց մասնակիցների թվերը, իսկ ապստամբությունների պատճառները ներկայացնելիս դրանք դիտարկում էին որպես կենցաղային հողի վրա ծագած խնդիրներ: Վերը նշված պարբերականները հաճախ փորձում էին ցույց տալ, որ Օսմանյան կայսրության վիլայեթներում տեղի ունեցող իրադարձությունները ոչ մի աղերս չունեն ընդհանուր իրավիճակի հետ և միայն մասնավոր բնույթ են կրում: Այնուամենայնիվ, այդ հրապարակումներից որոշները ցույց էին տալիս իրենց թաքուն համակրանքը բուլղարների ազատագրական պայքարին ու նրա գործիչներին:

3. Արևմտահայ լրագրերը մեծ անդրադարձներ նվիրեցին բուլղարների ազատագրական պայքարին՝ ներկայացնելով Փարիզի պայմանագրից հետո ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները: Արևմտահայ մամուլի ներկայացուցիչները շարունակեցին նախորդ շրջանի հրապարակումների իրենց զգուշավոր ոճը՝ հաճախ մեղադրելով և քննադատելով ազատագրական գործիչներին ու նրանց գաղափարները: Թերթերը գովերգում էին թուրքական սուլթանների իրականացրած քաղաքականությունը, որոնց գործունեության յուրաքանչյուր քայլ լայնորեն լուսաբանվում էր: Արևմտահայ թերթերը մեղադրում էին բուլղար վտարանդիներին, ովքեր ազատագրական պայքարի հիմնական կազմակերպիչներն էին: Նրանց համարում էին ավազակներ, որոնք խաթարում են Օսմանյան կայսրության ներքին կյանքը: Սակայն Զեյթունի ապստամբությունից հետո բուլղար ազատարարների նկատմամբ վերաբերմունքը որոշակիորեն սկսվեց փոխվել: Արևմտահայ թերթերը աստիճանաբար հիմնական քննադատության թիրախ սկսեցին դարձնել օտար պետություններին՝ նրանց դերակատարությունը բուլղարական խնդրում համարելով բացասական: Այս շրջանում արևմտահայ մամուլը ներկայացնում է նաև թուրքական իշխանությունների ճնշումները բուլղարական մամուլի նկատմամբ, որոնք ամիսներ շարունակ չէին կարողանում տպագրվել: Դրանով նրանք ներկայացնում էին Օսմանյան կայսրության քաղաքականությունը մամուլի և ազատ խոսքի նկատմամբ, որն ամեն քայլի դատապարտվում էր վերջիններիս կողմից:

4. «Արշալույս արարատյան», «Մասիս», «Ավետաբեր» թերթերը մանրամասն անդրադարձներ կատարեցին բուլղարների եկեղեցական խնդրին:

Պարբերականները մշտական թղթակցություններ նվիրեցին եկեղեցական ինքնավարության ճանաչման գործընթացին՝ ներկայացնելով խնդրի տարբեր կողմերը: Թերթերը բուլղարական եկեղեցու ինքնավարության ճանաչմանը միտված պայքարը համարում են եվրոպական երկրների միջամտության և նրանց անձնական շահերի արդյունք, որը ցանկանում է բուլղարական եկեղեցին կտրել հունական պատրիարքությունից և դարձնել հռոմեադավան կամ բողոքական եկեղեցու հետևորդ: Խնդիրների քննարկման ժամանակ մեծ տեղ են զբաղեցնում հունական եկեղեցու շահերի պաշտպանությունը, բուլղարական եկեղեցու ինքնուրույնության դատապարտումը, էկզարխության հռչակման գործընթացները և այլն: Արևմտահայ մամուլի այդպիսի անդրադարձները կապված էին նաև հասունյան և հակահասունյան պայքարի հետ: Երկու ժողովուրդների մոտ տեղի ունեցող կրոնական գործընթացները, ըստ պարբերականների, ունեին ընդհանուր գծեր և անմիջական աղերսներ եվրոպական կաթոլիկ քարոզչության հետ: Արևմտահայ թերթերը հիմնականում քննադատում են այս պայքարը՝ այն համարելով կաթոլիկների ապարդյուն գործունեության արդյունք: Եկեղեցական խնդրում անդրադառնալով Ռուսաստանի շահերին, արևմտահայ մամուլը նրանց հայացքները չափավոր է համարում՝ ցույց տալով, որ ռուսական կառավարությունը բավական զգուշավոր է և համեմատաբար չեզոք դիրքորոշում ունի: Այդպիսի դիրքորոշումը արևմտահայ մամուլը պատճառաբանում է նրանով, որ ռուսական իշխանությունները չեն ցանկանում խաթարել Կ. Պոլսի հունական պատրիարքության հետ հարաբերությունները: Արևմտահայ մամուլը բավական զուսպ է արտահայտվում և՛ Բ. Դռան, և՛ Կ. Պոլսի հունական պատրիարքության վերաբերյալ: Պարբերականները առավել զուսպ են բուլղարական եկեղեցական խմորումների հարցում: Դա բխում էր այն ճիշտ պատկերացումից, որ բուլղարական եկեղեցու ինքնուրույնության ձգտումների հետևում արևմտահայ պարբերականները նկատում էին բուլղարների ազատագրական պայքարը:

5. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում և Բեռլինի վեհաժողովի օրերին արևմտահայ մամուլը վերստին ուշադրության կենտրոնում է պահում Բուլղարական հարցը: Արևմտահայ մամուլի առաջին էջերում մշտապես քննարկվում են այս հարցի տարբեր կողմերը: Հայկական մամուլը գտնում է, որ միջազգային հանրությունը մեծ ուշադրություն է հատկացնում բուլղարների խնդրին, սակայն նշում, որ դա բավական չէ, քանզի օգնելով մեկ երկրի նրանք անտարբերության են մատնում մյուսներին՝ ի նկատի ունենալով հայերին, որոնց հարցին միտված Մեծ տերությունները գրեթե ոչինչ չէին ձեռնարկում: Արևմտահայ պարբերականները բուլղարների հարցի լուծումը վերապահում են Ռուսաստանին, որը խնդրի լուծումով կմեծացներ իր ազդեցությունը Բալկանյան թերակղզում: Այս հարցի ծագումը, ըստ արևմտահայ մամուլի, պատճառ է նրա, որ թուրքական

իշխանությունները տարիներ շարունակ չեն կատարել բարեկարգություններ այս տարածքներում: Հայկական մամուլը գտնում է, որ այս ամենի հետևանքով արևմտաեվրոպական տերությունները չեն օգնում Օսմանյան կայսրությանը Ռուսաստանի դեմ պայքարում: Թերթերը այդպիսով կոշտացնում են իրենց դիրքորոշումը թուրքական իշխանությունների նկատմամբ և սկսում են ավելի ազատորեն արտահայտել իրենց կարծիքը այս խնդրում: Սա կապված էր, այն հանգամանքի հետ, որ Հայկական հարցը ևս քննարկվում էր Բեռլինի վեհաժողովում և Բուլղարական հարցի լուծումը անմիջականորեն կապված էր արևմտահայերի ազատագրության խնդրին, քանզի ըստ արևմտահայ մամուլի՝ դրանք գտնվում էին միևնույն հարթության վրա:

6.Բուլղարների եկեղեցական խնդիրը իր անդրադարձներն ունեցավ նաև արևելահայ մամուլում: Պարբերականների քննության հիմնական նյութը դարձավ կաթոլիկ և բողոքական եկեղեցիների ներգրավվածությունը խնդրում: Սակայն բուլղարները հակված չեն այդ եկեղեցիների հետ գործակցելուն, և իրավացիորեն հայկական մամուլը գտնում է, որ տերությունների կրոնական խոստումները միայն ստեր են և չեն բխում բուլղարների իրական շահերից: Բացի այդ հայկական մամուլը գտնում էր, որ տեղեկությունները կաթոլիկ և բողոքական քարոզիչների մասին չափազանցված են և նրանք այդքան էլ մեծ ազդեցություն չունեն երկրում: Արևելահայկական մամուլը ներկայացնում է նաև այն ճնշումներն ու հարստահարությունները, որոնք իրականացնում էին թուրքական իշխանությունները բուլղարների նկատմամբ, որն էլ արտահայտվում էր կրոնական ինքնավարության ձգտումներով: Հայկական պարբերականները հունական եկեղեցու հարցում ավելի չեզոք դիրքորոշում ունեին, որը հավանաբար պայմանավորված էր այն հանգամանքով, որ չէին ցանկանում փչացնել հայ ժողովրդի հարաբերությունները եկեղեցական այդ կառույցի հետ:

7.Արևելահայ մամուլը համեմատաբար քիչ է անդրադարձել բուլղարների ազատագրական պայքարին: Դա հատկապես վերաբերում էր 19-րդ դարի առաջին կեսը ընդգրկող ժամանակաշրջանին: Փարիզի հաշտության պայմանագրից հետո բուլղարների ազատագրական պայքարը սկսվեց ավելի շատ ներկայացվել արևելահայ մամուլում, որը պայմանավորված էր տարածաշրջանային քաղաքական փոփոխություններով: Այդ իրադարձությունների կիզակետում էր հայտնվել Ռուսաստանը, որի տիրապետության տակ էին աշխատում և հրատարակվում արևելահայ պարբերականները: Նրանք ամեն առիթով ներկայացնում էին Օսմանյան կայսրության ներքին դրությունը, որի կարևորագույն խնդիրներից էր Բուլղարական հարցը: Հայկական պարբերականների մշտական ուշադրության կենտրոնում էին գտնվում բուլղար ազատարարների գործողությունները, որոնց քայլերը զուգորդվում էին հայության ձգտումներին: Արևելահայ մամուլը փորձում էր ընդհանրություններ գտնել Հայկական և Բուլղարական հարցերի միջև, քանզի երկուսն էլ գտնվում էին նույն աշխարհաքաղաքական

պայմաններում և միմյանց առաջ ունեին նույն խնդիրները: Ռուսական իրականության մեջ հրատարակվող հայկական թերթերը ոչինչ չէին խնայում Օսմանյան կայսրության քաղաքականությունը քննադատելու և առկա խնդիրները վերհանելու գործում: Հայկական մամուլը իր հարվածներն ուղղում էր նաև Մեծ տերությունների երկդիմի քաղաքականության դեմ: Արդեն Բեռլինի վեհաժողովի օրերին Բուլղարական հարցի շոշափումը կարևորվեց նրանով, որ այն նախատիպ կարող էր հանդիսանալ Հայկական հարցի լուծման համար: Միաժամանակ, արևելահայ պարբերականների արդարացի զայրույթն էր առաջացնում այն հանգամանքը, որ նույն սկզբունքները չեն գործում Բուլղարական և Հայկական հարցերի պարագայում, քանզի առաջինը, ըստ էության, Բեռլինի վեհաժողովում լուծվեց, իսկ երկրորդ խնդիրը այդպես էլ բաց մնաց անորոշ ժամանակով:

Հենվելով վերոնշյալ հանգամանքների վրա կարող ենք փաստել, որ բուլղարների 1840-1870-ական թթ. ազատագրական պայքարը կարևորագույն իրողություն էր ոչ միայն Բալկանյան երկրների քաղաքական կյանքում, այլ նաև Եվրոպայում: Հարցը էականորեն կապված է նաև հայերի ազատագրական ձգտումների հետ, որոնք մամուլի միջոցով երբեմն բացահայտ, երբեմն էլ ծածուկ փորձել են հանրությանն ուղղորդել դեպի ազատագրական պայքարը՝ ցույց տալով բուլղարական օրինակը:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատությունները

1. Բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը «Մշակ»-ի էջերում (1870-ական թթ.), ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու. հասարակական գիտություններ (աստվածաբանություն, արևելագիտություն, պատմություն), թիվ 1.6 (9), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 163-168:
2. Բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար պայքարը Օսմանյան կայսրությունում, Լրատու - Մեսրոպ Մաշտոց համալսարան, Երևան, 2016, էջ 155-164:
3. 1876 թվականի բուլղարական ապստամբության արձագանքները արևմտահայ մամուլում, Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 196-211:

МХОЯН ГАЙК ХАЧАТУРОВИЧ

ОТКЛИКИ НАЦИОНАЛЬНОГО ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ БОЛГАРСКОГО НАРОДА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ (40-70 гг. XIX века)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 "Всемирная история".
Защита состоится 24 июня, в 15:00 часов на заседании специализированного совета 006, деиствующего при Институте востоковедения НАН РА.
По адрессу 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена откликам армянской прессы относительно освободительной борьбы болгар в Османской империи Предметом изучения стали подходы армянской прессы, периодические обращения к освободительной борьбе болгар. Обращение армянской прессы к Болгарскому вопросу является самой главной темой данного исследования. Относительно этого вопроса это был первый труд, который редакторы армянской прессы попытались проанализировать и сделать доступным читателю. Здесь раскрываются идеологические точки зрения восточно и западноармянской прессы.

Особая значимость рассматриваемой основной задачи определяется рядом обстоятельств, следующие из которых являются важными; еще в конце 18 -в начале 19 вв. народы Балканского полуострова начинают свою освободительную борьбу, которая должна была привезти к независимости выше отмеченных народов. Болгария, как одна из самых главных балканских стран, непосредственно была включена в эту борьбу и начала свою подготовку к освободительному движению. В 1830гг в Болгарии начали предпринимать направленные на освобождение шаги, которые в некоторых областях привели к местным стычкам. 1840гг до Крымской война эти восстания постепенно стали более организованными и объединёнными. Освободительное движение болгар после собрания совета в Париже перешло к более решительный этап. Потом наконец, получило развязку в 1878г Берлинским договором, который наградил Болгарию самоуправлением. Хронология тезисов включает в себя 1840-70гг, когда освободительная борьба болгар вступила в решительный этап. Начиная с 1840г. Болгарские восстания становятся более распространенными , начинают приобретать вождей, тем самым привлекают интерес к освободительному движению не только европейской, но и армянской прессы. Восточноармянская пресса обращается к проблеме, начиная с первых попыток проведений восстаний, которые происходили в Нище Брилей. Западноармянская пресса

намного позднее обратилась к этой проблеме, начиная свои наблюдения после крымской войны. Редакции восточно-западноармянской прессы длятся до 1878г. Берлинского верховного совета и провозглашения процесса самоуправления Болгарии, чем и заканчивается этот этап болгарского освободительного движения.

Труд оценивает роль прессы в процессе исторического развития и дает широкое представление армянскому общественному мышлению, для нового и практичного изучения.

Тезис изложен посредством комплекса аффилированных методов и подходов. Изучение и анализ основного источника просматриваемой прессы свершился посредством метода анализа содержания. Труд состоит из предисловия, трех глав, вывода, использованных источников и литературного списка.

Предисловие основывается на актуальности темы и научной новинки, представляются задачи и основные цели, выбор хронологических границ темы, дается краткая теория использованных источников и литературы.

Первая глава, которая носит название **"Освободительная борьба болгар в Османской империи: основные вопросы"**, обращается к освободительной борьбе болгар в Османской империи, выделяя причины, этапы, главные точки зрения и основные намерения. В данной главе тезиса представлены основные вопросы освободительной борьбы болгар в Османской Империи 1840-1870 ых гг, которые были направлены на победу освободительного движения и приобретения независимости.

Вторая глава диссертации - **"Заподноармянская пресса о национальном-освободительном борьбе болгарского народа 1840-1870ых гг"** посвящается обращениям демократических, национально-патриотических, либеральных направлений, относительно болгарского освободительного движения западноармянской прессе. Были представлены выдержки восточноармянской прессы, позиции анализы тех событий, благодаря которым болгары получили самоуправление.

В третьей главе диссертации **"Восточноармянская пресса о национально-освободительной борьбе болгарского народа (1840-70гг)"** представлены точки зрения различных направлений восточноармянской прессы, исходящих от болгарского народа, который, находясь в составе Османской Империи, боролся за свою свободу и права. Обсуждали задачи российской ориентации и статьи направленные на воодушевление армянской освободительной борьбы.

В Заключении диссертационной работы представлены основные выводы по пассмотренным проблемам.

HAYK KH. MKHOYAN

THE REPERCUSSIONS OF THE BULGARIAN NATIONAL-LIBERATION STRUGGLE IN THE OTTOMAN EMPIRE IN THE ARMENIAN PRESS (40s -70s of the 19th century)

The defense of the dissertation will take place at 24 of June, 15.00, at the meeting of the Speciallzed Concil 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Maghramyan Ave., 24/4

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

The subject matter of the dissertation is the study of the repercussions of the Bulgarian national liberation struggle in the Ottoman Empire in the Armenian press from 40s to 70s of the 19th century. The object of the paper is the approaches of the Armenian press and the repercussions of the periodicals on the national liberation struggle of the Bulgarians.

The novelty of the research is the reflections of the Armenian press of the Bulgarian question. The present paper is the first to analyze the publications of the Armenian press and to make them available for the reader. The ideological orientations of the Western and the Eastern Armenian press are revealed.

Particular significance of the subject under study is preconditioned by a number of circumstances of which the following are to be considered. Nations of the Baltic peninsula had already started their liberation struggle from the end of the eighteenth to the beginning of the nineteenth century, which would eventually lead to the independence of the nations living in the above mentioned territory from the rule of Ottoman Empire. As a significant Baltic country Bulgaria was directly involved in this struggle and launched the preparation of its liberation struggle. In the 1830s in Bulgaria a range of steps were implemented aimed at independence which led to the spark of local clashes in certain places. Before the Crimean War in the 1840s these rebellions gradually became more coordinated. Bulgarian liberation struggle entered into a more critical phase after the Paris Conference and was eventually solved by the Berlin Agreement in 1878 which granted Bulgaria autonomy.

This was a model of struggle for other subjects of the Ottoman Empire Armenians included.

The dissertation chronology incorporates the years from 1840-1870 when the Bulgarian liberation struggle had entered into a critical phase. Starting from 1840 Bulgarian rebellions became more expanded, leaders emerged and consequently

interest increased towards their liberation struggle both in the European and Armenian press. The Western Armenian press touches upon the issue from the very first attempts of the rebellions which took place in Nish, Brile and elsewhere. The Eastern Armenian press addresses the issue much later making its primary reflections after the Crimean War. Both Western and Eastern publications date back to the Berlin Summit and the process of the Bulgarian autonomy declaration. This is when this phase of the Bulgarian liberation ends.

The dissertation also signifies the role of press in the development of History as a science and provides a broad picture for contemporary and practical study of the Armenian social mind.

The paper is written by means of the combination of interconnected methods and approaches. The starting point of the main material of the research is the content analysis.

The paper consists of Introduction, three chapters, Conclusion and Bibliography.

Introduction presents the topicality and novelty, the main goals and objectives of the research, the choice of the chronological boundaries of the research, as well as the summarized theory of the literature and the sources of data used in our investigation.

Chapter I, entitled **"The Bulgarian Liberation struggle in the Ottoman Empire: basic questions"**, touches upon the national liberation struggle of the Bulgarians in the Ottoman Empire focusing on presentation of the reasons, the phases, the most important ideologists and the main purposes of the struggle. This chapter of the dissertation presents the basic questions of the Bulgarian liberation struggle in the Ottoman Empire in 1840-1870 which were aimed at the victory of the rebellion and the acquisition of independence.

Chapter II, entitled **"Western Armenian Press about the Bulgarian National Liberation Struggle (1840s-1870s)"** is devoted to the reviews on the liberation struggle of the Bulgarians by the Western Armaneian press, democratic, national-conservative and liberal directions. The chapter also presents reviews, positions and analysis of the Western Armanian press of the facts due to which the Bulgarians gained independence.

Chapter III entitled **"Eastern Armenian Press about the Bulgarian National Liberation Struggle (1840s-1870s)"** presents the standpoints of different directions of eastern Armeneian press about the rebellion of the Bulgarian people for their freedom and rights in the Ottoman Empire. The problems concerning the Russian orientation of the Eastern Armenian press as well as the articles which were aimed at emboldening the Armenian liberation struggle are considered.

The Conclusion of the dissertation is presents the main findings of the analyzed problems.